Հաստատված է
29.08.2019
ամբիոնի 1-ին նիստում
(արձ. թիվ ) ամբիոնի պետ՝
……...……….…………………..
(ստորագրություն)
…………..………………………
(ամիս ամսաթիվ)

# ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

# ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ | | Մասնագիտական օտար լեզու |
| | | |
| ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ | | |
| | | |
| ՖԱԿՈՒԼՏԵՏ | | Իրավագիտություն, Մագիստրատուրա առկա անվճար |
| | | |
| ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ | | Իրավագիտություն |
| | | |
| ԱՄԲԻՈՆ | | Լեզուների<br>E-mail: lezuneriambion@mail.ru |
| | | |
| ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ | | Ոստ. գնդապետ Ա. Հայրապետյան<br>E-mail: anialex-2011@mail.ru<br>041 45 64 34 |
| | | |
| ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ | | 2019-2020 ուստարի, 1-ին կուրս |
| ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ | | Մագիստրատուրա |

| | | |
|---|---|---|
| ԿՐԵԴԻՏՆԵՐ | | |
| | | |
| ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ | | Դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 102 ժամ գործնական պարապմունք՝ առաջին կիսամյակում 48 ժամ, երկրորդում՝ 54: |
| | | |
| ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ | | Օտար լեզվի բակալավրական աստիճանի գիտելիքներ |
| | | |
| ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ | | Դասընթացի բովանդակությունը ներկայացված է հետևյալ բլոկների տեսքով՝<br>• Անգլերենի բազային քերականական հարացույց |

| | | |
|---|---|---|
| | | • Հիմնական բառաֆոնդ<br>• Մասնագիտական բառապաշար<br>• Լեզվական կաղապարներ խոսքային գործունեության իրականացման համար<br>• Լեզվամշակութային միավորներ<br>• Ռեցեպտիվ (կարդալ, լսել) և ռեպրոդուկտիվ (խոսել, գրել) վարժությունների համակարգ |
| | | |
| ՆՊԱՏԱԿ<br><br>ԽՆԴԻՐ/ՆԵՐ | | Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել լեզվական գիտելիքներ և ձևավորել կարողություններ մասնագիտական գործունեության լիարժեք իրականացման համար:<br><br>Դասընթացի խնդիրներն են՝<br>• Իրավապահ մարմնի աշխատակցի կողմից լեզվական գիտելիքների յուրացումը:<br>• Հմտությունների և կարողությունների զարգացումը՝ ստացված լեզվական գիտելիքները մասնագիտական խնդիրների լուծման գործում կիրառելու համար:<br>• Լեզվամշակութային կոմպետենցիայի ձևավորումը տարբեր սոցիալ-մշակութային հանրույթների հետ խոսքային գործունեության ծավալման նպատակով: |
| | | |
| ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ<br><br>1. Իմանա<br><br>2. Կարողնա<br><br>3. Տիրապետի | | Սովորողները պետք է իմանան՝<br>• Անգլերենի քերականության հարացույցը<br>• Հիմնական բառաֆոնդի և մասնագիտական բառապաշարի հիմնական միավորները<br>• Խոսքային ռեպրոդուկտիվ և ռեցեպտիվ գործունեության հիմնական կառույցները<br><br>Սովորողները պետք է կարողանան՝<br>• Դրսևորել մասնագիտական լեզվական գիտելիքներ<br>• Գործնականում կիրառել լեզվական գիտելիքները լեզվական նյութի վերարտադրման համար<br>• Համադրել լեզվական ֆոնային գիտելիքները թարգմանությունների կատարման նամար<br>• Իրականացնել խոսքային գործունեություն՝ մասնագիտական գործունեության ընթացքում ծագած խնդիրների լուծման համար<br><br>Սովորողները պետք է տիրապետեն<br>• Յուրացված լեզվական գիտելիքներն անձանոթ համատեքստում ընդհանրացնելու և կիրառելու հմտություններին: |

| | | |
|---|---|---|
| ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ | | |

| | | |
|---|---|---|
| Հիմնական | | 1. А. Я. Зелиман, Английский для юристов, «Феникс» 2004<br>2. Հայրապետյան Ա., *Զրուցարան ոստիկանության ծառայողների համար,* Զանգակ հրատարակչություն, Երևան 2012 |
| | | |
| Լրացուցիչ | | 1. Richards, J. C., *Interchange*, Fourth Edition, Cambridge University Press 2013<br>2. Oxeden, C., *New English File*, Third Edition, Beginner, Oxford University Press 2011<br>3. Cunningham S., Moor P., *New Cutting Edge*, Elementary, Pre-intermediate, Longman 2005<br>4. Գեղարվեստական գրականության էլեկտրոնային կայքեր՝ Learn English Through Stories, Oxford Detective Stories, Cambridge Detective Stories. |
| | | |

| ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ | Գնահատման արդյունարար միավոր | Գնահատականը տառանշումով |
|---|---|---|
| | 18-20 | Գերազանց |
| | 13-17 | Լավ |
| | 8-12 | Բավարար |
| | 0-7 | Անբավարար |
| | 0 | Չներկայացած / Չի ներկայացել |
| | Ստուգարքային գնահատում | Ստուգված / չստուգված |

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ**

Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% առաջադիմություն:

Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»:

Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝

ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, պատասխանում է առաջադրված հարցերին, վերարտադրում է տեքստ(եր)ը, յուրացրել է բառապաշարը, այն կիրառում է այլ համատեքստերում, տիրապետում է անցած քերականական կառույցներին, կիրառում է դրանք խոսքային գործունեության մեջ, թեստային աշխատանքները կատարում է գրագետ, կարողանում է թարգմանել հանձնարարված նյութը:

բ) «Լավ», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, պատասխանում է առաջադրված հարցերին, վերարտադրում է տեքստ(եր)ը, յուրացրել է բառապաշարը, այն կիրառում է այլ համատեքստերում, տիրապետում է անցած քերականական կառույցներին, կիրառում է դրանք խոսքային գործունեության մեջ, թեստային աշխատանքները կատարում է գրագետ, կարողանում է թարգմանել հանձնարարված նյութը և վերոհիշյալ առաջադրանքներում էական սխալներ թույլ չի տալիս:

գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը և պատասխանում է առաջադրված հարցերի 50%-ից ավելիին, վերարտադրում է տեքստի ½ մասը, յուրացրել է բառապաշարի 50%-ից ավելին, կարողանում է նոր բառերով կազմել նախադասություններ, պատկերացում ունի անցած քերականական կառույցի մասին, կարողանում է թարգմանել համեմատաբար հեշտ նախադասությունները:

դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի տիրապետում անցած բառապաշարին, չի վերարտադրում տեքստի ½ մասը, չի կարողանում նոր բառերով կազմել նախադասություններ, չի տիրապետում անցած քերականական նյութին, չի կարողանում թարգմանել համեմատաբար հեշտ նախադասությունները:

| | | |
|---|---|---|
| ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | |
| | | Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին: |
| **Ներկայություն** | | |
| **Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ** | | Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է բառարաններից, տետրերից և դասագրքերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր: |
| **Ինքնուրույն և գործնական աշխատանքներ** | | Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում:<br>Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի: |

# ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

| ՕՐ/ՇԱԲԱԹ | ԹԵՄԱ/ԺԱՄ | ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ | ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ | ԳՆԱՀԱՏՈՒՄ |
|---|---|---|---|---|
| **1-ին շաբաթ** | Գործնական պարապմունք /4 ժամ/<br>**Unit 1**<br>**Բառակազմություն**<br>-er գոյականակերտ վերջածանց<br>**Քերականություն**<br>գոյականի սեռական հոլովի կազմությունը<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>ողջույն, հրաժեշտ<br>**Տեքստ.** Meet My Friend | **Տեսակը՝** գործնական<br>• բացատրում/ցուցադրում,<br>• մտագրոհ,<br>• քննարկումներ:<br><br>**Քննարկվող հարցեր՝** հայերենի և անգլերենի հոլովների տարբերությունը: | **1.** Կազմել գոյականներ –er վերջածանցով և գործածել նախադասությունների մեջ,<br>**2.** Կազմել հատկացուցիչ-հատկացյալ կապակցություններ և գործածել նախադասությունների մեջ,<br>**3.** Ներկայացնել իրենց ընկերներին: | **1.** Կիրառում է –er գոյականակերտ վերջածանցները՝ այլ խոսքի մասերից գոյականներ կազմելու նպատակով,<br>**2.** Կարողանում է գոյականները գործածել սեռական հոլովով,<br>**3.** Կարողանում է ողջունել և հրաժեշտ տալ,<br>**4.** Կարողանում է ներկայացնել ընկերներին: |
| **2-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /4 ժամ /<br>**Unit 1**<br>**Քերականություն**<br>– հրամայական եղանակ<br>– թվական անուն<br>– գոյականների հոգնակի թվի կազմությունը | **Տեսակը՝** գործնական<br>• բացատրում /ցուցադրում,<br>• ուսումնական առարկայական միջոցների կիրառում (Rialia):<br><br>**Նպատակը՝**<br>• կարողանալ հաշվել գոյականները, ասել նրանց թվային հաջորդականությունը և թվային | **1.** Բանավոր հարց ու պատասխան,<br>**2.** Լսարանային պարագաների թվարկում ըստ քանակի և թվային հաջորդականության, անհաշվելի գոյականների և անեզակի գոյականների բառային քարտեզի կազմում,<br>**3.** Երկխոսություններ | **1.** Հասկանում է հրամայական եղանակի կազմությունը և կարողանում է գործածել խոսքի մեջ,<br>**2.** Ճանաչում է թվերը,<br>**3.** Կարողանում է գոյականները |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **Հաղորդակցման հմտություններ**<br>1. Դիմելու ձևեր,<br>2. Ծանոթություն,<br>3. Մաղթանքներ<br>**Տեքստ.** The Man Who Escaped Ep. 1 | կարգը:<br>• հրամայական եղանակը գործածել հրաման, խնդրանք և մաղթանք արտահայտելու նպատակով:<br>• գոյականները գրել հոգնակի թվով, իմանալ բացառությունները:<br>• հարստացնել մասնագիտական բառապաշարը:<br><br>**Քննարկվող հարցեր՝** համեմատել հայերենի և անգլերենի հոգնակի թվի կազմության բացառությունները: | • «Ծանոթություն»,<br>• «Մաղթանքներ» թեմաներով,<br>4. Տեքստի բանավոր վերարտադրում: | գործածել հոգնակի թվով,<br>4. Կարողանում է ծանոթանալիս ներկայանալ և հասկանում է դիմացինին,<br>5. Գիտի մաղթանքներ տարբեր առիթներով,<br>6. Կարողանում է վերարտադրել "The Man Who Escaped" տեքստի 1-ին մասը: |
| **3-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /4 ժամ /<br>**Unit 2**<br>**Բառակազմություն**<br>-ist գոյականակերտ վերջածանցով:<br>**Քերականություն**<br>անձնական, ցուցական, ստացական, անորոշ դերանուններ:<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>խնդրանք, շնորհակալություն, ներողություն:<br>**Տեքստ.** Time For Fun | **Տեսակը՝** գործնական<br>• դերախաղ,<br>• ձնագնդի մեթոդ,<br>• բացատրում/ ցուցադրում:<br><br>**Նպատակը՝**<br>• հասնել տեքստի բառապաշարի յուրացմանը լսարանում ձնագնդի մեթոդով,<br>• գտնել –ist վերջածանցով գոյականների հայերեն համարժեքները,<br>• դերանունները ճիշտ գործածել նախադասությունների մեջ: | 1. Կազմել գոյականներ –ist վերջածանցով,<br>2. Թեստերում բաց թողնված բառերը լրացնել համապատասխան դերանուններով,<br>3. Բլից հարցում,<br>4. Տեքստի վերաբերյալ հարցերի կազմում,<br>5. Տեքստի վերարտադրում: | 1. Ստեղծում է նոր բառեր՝ -ist գոյականակերտ վերջածանցով,<br>2. Ճանաչում է բոլոր դերանունները,<br>3. Կարողանում է արտահայտել խնդրանք, շնորհակալություն, ներողություն և այդ շրջանակներում ընկալում է դիմացինին,<br>4. Հասկանում է "The Man Who Escaped" տեքստը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | և կարողանում է պատասխանել հարցերին: |
| **4-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /4 ժամ/<br>**Unit 2**<br>**Քերականություն**<br>1. ժամը:<br>2. “many-much-few-little” քանակական ածականները:<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>ինչպես կողմնորոշվել քաղաքում:<br>**Տեքստ.** The Man Who Escaped Ep. 2 | **Տեսակը՝** գործնական<br>• բացատրում/ցուցադրում,<br>• հարց ու պատասխան,<br>• դերախաղ:<br><br>**Նպատակը՝**<br>• գաղափար տալ քանակական ածականների և նրանց ճիշտ գործածության վերաբերյալ,<br>• կարողանալ հարցնել և ասել ժամը,<br>• զարգացնել մասնագիտական նոր բառապաշար:<br>**Քննարկվող հարցեր՝** հայերեն և անգլերեն ժամերը ձևակերպելու հակադրությունները: | **1.** Ժամացույցի վրա ցույց տալ ժամերը և ասել,<br>**2.** Թեստային աշխատանք քանակական ածականների վերաբերյալ,<br>**3.** Թեմային առնչվող մասնագիտական երկխոսությունների կազմում,<br>**4.** Տեքստի վերարտադրում: | **1.** Կարողանում է հարցնել ժամը և պատասխանել հարցման դեպքում,<br>**2.** Ճանաչում է քանակական ածականները և կարողանում է ճիշտ կիրառել,<br>**3.** Կարողանում է օգնել քաղաքացուն ճիշտ կողմնորոշվել քաղաքում և ցույց է տալիս ճանապարհը,<br>**4.** Վերարտադրում է “The Man Who Escaped” տեքստի 2-րդ մասը: |
| **5-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /4 ժամ/<br>**Unit 3**<br>**Բառակազմություն**<br>-man, -(i)an, -able վերջածանցներ<br>**Քերականություն**<br>անորոշ ներկա ժամանակաձև | **Տեսակը՝** գործնական<br>• բացատրում/ցուցադրում,<br>• լսողական վարժություններ,<br>• մտքերի ճառագայթաձև տարափ,<br>• դերախաղ:<br>**Նպատակը՝**<br>• նշված վերջածանցներով բառերի իմացություն և ճիշտ կիրառում,<br>• ներկայի համատեքստում | **1.** Նշված վերջածանցներով գոյականները գործածել նախադասությունների մեջ և թարգմանել,<br>**2.** Անորոշ ներկայով նախադասությունները դարձնել հարցական և ժխտական,<br>**3.** Քերականական | **1.** Ճանաչում է –man, -(i)an, -able վերջածանցները և կիրառում է բառակազմության մեջ,<br>**2.** Գիտի Անորոշ ներկա ժամանակաձևի կազմությունը և կիրառությունը, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **Հաղորդակցման հմտություններ** հասարակական կարգ ու կանոն<br>**Տեքստ.** Where do they Live? | արտահայտել ամենօրյա (պարբերաբար կատարվող) գործողությունները,<br>• նոր բառապաշարի յուրացում,<br>• դեպքի վայրի նկարագրում: | վարժություններ,<br>**4.** Թեմային առնչվող երկխոսություններով դերախաղ,<br>**5.** Տեքստի վերարտադրում,<br>**6.** Հանցագործության վայրի նկարագրում: | **3.** Գիտի հասարակական կարգ ու կանոնին վերաբերող բառերն ու արտահայտությունները և կարողանում է անհրաժեշտության դեպքում կիրառել,<br>**4.** Կարդում և թարգմանում է “The Man Who Escaped” տեքստը, կարողանում է պատասխանել հարցերին: |
| **6-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /4 ժամ/<br>**Unit 3**<br>**Քերականություն**<br>There+ to be արտահայտության գործածություն<br>**Հաղորդակցման հմտություններ** ճանապարհային երթևեկության նշանները և կանոնները<br>**Տեքստ.**<br>1. The Man Who Escaped Ep. 3<br>**2.** Time For Fun | **Տեսակը՝** գործնական<br>• գնդակի մեթոդ,<br>• բացատրական/ցուցադրական,<br>• դերախաղ:<br><br>**Նպատակը՝**<br>• հարցնել, նկարագրել և հերքել՝ ի՞նչ կա պատկերված նկարներում,<br>• իմանալ ճանապարհային երթևեկության նշանները և կանոնները,<br>• մասնագիտական նոր բառապաշարի յուրացում և գործածում:<br>**Քննարկվող հարցեր՝** համեմատել there+to be-ով նախադասությունները հայերենի հետ: | **1.** There+to be արտահայտությունը ճիշտ կիրառել վարժությունների մեջ,<br>**2.** Ցույց տալ երթևեկության նշանները և թարգմանել (մեկնաբանել),<br>**3.** Դերախաղի միջոցով ցույց տալ ճանապարհային երթևեկության կանոնների խախտումները,<br>**4.** Վերարտադրել տեքստը: | **1.** Կարողանում է խոնարհել ՜to be՜ բայը և ճիշտ գործածել խոսքի մեջ,<br>**2.** Ճանաչում է ճանապարհային երթևեկության նշաններն ու կանոնները,<br>**3.** Կարողանում է կարդալ ու թարգմանել “Time for fun”-ի տեքստը,<br>**4.** Կարողանում է վերարտադրել “The Man Who Escaped” տեքստի 3-րդ մասը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **7-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /4 ժամ/<br>**Unit 4**<br>**Բառակազմություն**<br>-ment,-ion գոյականակերտ և -ic ածականակերտ վերջածանցներ,<br>**Քերականություն**<br>ածականակերտ դերբայ 1 (Participle 1)<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>փաստաթղթեր, վթար<br>**Տեքստ.** Pete is Preparing for the Seminar | **Տեսակը՝ գործնական**<br>• բացատրական/ցուցադրական,<br>• բացատրական թարգմանություն,<br>• ձնազնդի մեթոդ,<br>• դերախաղ:<br><br>**Նպատակը՝**<br>• կարողանալ կազմել գոյականներ և ածականներ նշված վերջածանցներով և գործածել նախադասություններում,<br>• ճիշտ գործածել ածական դերբայ 1-ը,<br>• յուրացնել նոր բառապաշարը: | **1.** Կազմել գոյականներ և ածականներ նշված վերջածանցներով և գործածել խոսքի մեջ,<br>**2.** Գրատախտակին գրել Participle 1-ով կազմված վարժությունները և թարգմանել,<br>**3.** Դերախաղեր լսարանում,<br>**4.** Տեքստի վերարտադրում: | **1.** Կարողանում է նշված վերջածանցներով նոր բառեր կազմել և կիրառում է խոսքի մեջ,<br>**2.** Ճանաչում է “Participle 1”-ը և գործածում է տեղին,<br>**3.** Կարողանում է հարցնել և ներկայացնել փաստաթղթերը,<br>**4.** Գիտի վթարի հետ կապված արտահայտությունները և անհրաժեշտության դեպքում կարող ահազանգել և օգնություն ցույց տալ,<br>**5.** Կարողանում է կարդալ և թարգմանել “Pete is Preparing for the Seminar” տեքստը և պատասխանում է հարցերին: |
| **8-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /4 ժամ/<br>**Unit 4**<br>**Քերականություն**<br>1. շարունակական | **Տեսակը՝** գործնական<br>• բացատրում-ցուցադրում գրատախտակի վրա,<br>• լսողական վարժություններ,<br>• տեսաֆիլմ, | **1.** Ածական դերբայ 2-ով խճանկարի կազմում,<br>**2.** Նախորդ նյութերի ամփոփիչ առաջադրանք,<br>**3.** Տեսաֆիլմի դիտում և | **1.** Գիտի Շարունակական ներկա ժամանակաձևի կազմությունը և կիրառումը, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ներկա ժամանակաձև,<br>2. ածական դերբայ 2<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>օդանավակայանում<br>**Տեքստ.**<br>• The Man Who Escaped.<br>• Caught in his own Trap.<br>• Time for Fun. | • մտքերի ճառագայթաձև տարափ,<br>• դերախաղ<br><br>**Նպատակը՝**<br>• նշված քերականական ժամանակաձևի ճիշտ կիրառում,<br>• նոր նյութի յուրացում ձնագնդի մեթոդով,<br>• տեքստի վերարտադրում: | վերարտադրում,<br>**4.** Տեքստի բեմականացում,<br>**5.** Երկխոսությունների կազմում: | կարողանում է ճիշտ կիրառել խոսքի մեջ,<br>**2.** Ճանաչում է ածական դերբայ 2-ը և կարողանում է տեղին գործածել,<br>**3.** Գիտի "Օդանավակայան" թեմային առնչվող արտահայտությունները,<br>**4.** Կարդում և թարգմանում է "Caught in his own Trap" տեքստը և պատասխանում է հարցերին,<br>**5.** Կարդում և հայերեն վերարտադրում է "Time for Fun"-Ի տեքստը,<br>**6.** Վերարտադրում է "The Man Who Escaped" տեքստի 4-րդ մասը: |
| **9-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /4 ժամ/<br>**Unit 5**<br>**Բառակազմություն**<br>-ing գոյականակերտ վերջածանցը | **Տեսակը՝** գործնական<br>• բացատրական թարգմանություն,<br>• բացատրում/ցուցադրում,<br>• դերային խաղ:<br><br>**Նպատակը՝** | **1.** Կազմել գոյականներ –ing վերջածանցով և գործածել նախադասությունների մեջ,<br>**2.** Կազմել երկխոսություններ «կորցրած իրեր» թեմայով և գերունդի գործածությամբ, | **1.** Կարողանում է կազմել գոականներ –ing վերջածանցով,<br>**2.** Ճանաչում է "գերունդ"-ը և տեղում գործածում խոսքում, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **Քերականություն**<br>գերունդ<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>կորցրած իրեր<br>**Տեքստ.** At the Meeting. | • գերունդը ճիշտ գործածել,<br>• լեզվական նյութը տեսանելի դարձնել դերախաղի միջոցով:<br>**Քննարկվող հարցեր՝** համեմատել գերունդը հայերենի հետ: | 3. Վերարտադրել տեքստը: | 3. Գիտի “Կորցրած իրեր” թեմային առնչվող արտահայտությունները,<br>4. Կարողանում է կարդալ և թարգմանել “At the Meeting” տեքստը: |
| 10-րդ շաբաթ | Գործնական պարապմունք /4 ժամ/<br>**Unit 5**<br>**Քերականություն**<br>եղանակավորող բայեր<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>առաջին բուժօգնություն<br>**Տեքստ.**<br>1. The Man Who Escaped Ep. 5.<br>2. Time for fun. | **Տեսակը՝** գործնական<br>• բացատրական-ցուցադրական,<br>• գնդակի մեթոդ,<br>• վերարտադրողական,<br>• դերախաղ:<br><br>**Նպատակը՝**<br>• հստակ պատկերացնել տրված եղանակավորող բայերի ճիշտ գործածությունը,,<br>• կարողանալ առաջին բուժօգնություն ցույց տալ,<br>• վերարտադրել տեքստը: | 1. Դիտել տեսաֆիլմը և կարողանալ վերարտադրել հայերեն և անգլերեն,<br>2. Կետերը լրացնել եղանակավորող բայերով,<br>3. Կազմել երկխոսություններ,<br>4. Բեմականացնել Time for fun-ը: | 1. Ճանաչում է առավել հաճախ գործածվող եղանակավորող բայերը և նրանց տեղին գործածումը,<br>2. Գիտի “Առաջին բուժօգնություն” թեմային առնչվող արտահայտությունները,<br>3. Կարողանում է կարդալ և հայերեն վերարտադրել “Time for Fun”- տեքստը,<br>4. Կարողանում է վերարտադրել “The Man Who Escaped” տեքստի 5-րդ մասը: |
| 11-րդ շաբաթ | Գործնական պարապմունք /2 ժամ/<br>**Unit 6**<br>**Բառակազմություն** | **Տեսակը՝** գործնական<br>• բացատրական-ցուցադրական,<br>• խաչբառ,<br>• դերախաղ, | 1. Գտնել տրված վերջածանցներով գոյականների համարժեքները,<br>2. Գտնել տեքստում անորոշ | 1. Կարողանում է կազմել գոյականներ նշված վերջածանցներով,<br>2. Գիտի Անորոշ անցյալ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | -ance, -ence գոյականակերտ վերջածանցները<br>**Քերականություն**<br>անորոշ անցյալ<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>սպորտ, զվարճանք, հանգիստ:<br>**Տեքստ.** John's Composition. | • վերարտադրում:<br><br>**Նպատակը՝**<br>• նշված վերջածանցներով գոյականների տեղին գործածում,<br>• կարողանալ պատմել անցյալում կատարված գործողություններ,<br>• վերարտադրել տեքստը: | անցյալով դրված նախադասությունները,<br>3. Պատմել նախընտրած սպորտաձևի մասին,<br>4. Վերարտադրել տեքստը: | ժամանակաձևի կազմությունը և գործածումը,<br>3. Ճանաչում է առավել հաճախ գործածվող անկանոն բայերը,<br>4. Գիտի "Սպորտ, զվարճանք, հանգիստ" թեմային առնչվող բառերն ու արտահայտությունները,<br>5. Կարողանում է կարդալ և թարգմանել "John's Composition" տեքստը, պատասխանում է հարցերին: |
| 12-րդ շաբաթ | Գործնական պարապմունք /2 ժամ/<br>**Unit 6**<br>**Քերականություն**<br>վաղակատար ներկա<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>1. օրվա ժամերը,<br>2. շաբաթվա օրերը,<br>3. տարվա ամիսները,<br>4. տարվա եղանակները:<br>**Տեքստ.** | **Տեսակը՝** գործնական<br>• բացատրական-ցուցադրական,<br>• խճանկար,<br>• իլյուստրացիա:<br><br>**Նպատակը՝**<br>• նշված ժամանակաձևի ճիշտ կիրառում,<br>• մասնագիտական և առօրյա խոսակցական բառապաշարի հարստացում:<br><br>**Քննարկվող հարցեր՝** համեմատել նշված | 1. Խճանկարի կազմում,<br>2. Բլից հարցում,<br>3. Նախորդ նյութի կրկնություն,<br>4. Նախընտրած տարվա եղանակի նկարագրում,<br>5. Տեքստի վերարտադրում: | 1. Գիտի Վաղակատար ներկա ժամանակաձևի կազմությունը և կիրառումը,<br>2. Ճանաչում է օրվա ժամերը, շաբաթվա օրերը, տարվա ամիսները: Նկարագրում է տարվա եղանակները,<br>3. Կարդում և հայերեն վերարտադրում է |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 1. The Man Who Escaped. Ep.6,<br>2. Time for fun. | ժամանակաձևը հայերենի հետ: | | “Time for Fun”-Ի տեքստը,<br>4. Վերարտադրում է “The Man Who Escaped” տեքստի 6-րդ մասը: |
| **13-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /2 ժամ/<br>**Unit 7**<br>**Բառակազմություն**<br>1. -any, -ory, -ous ածականակերտ վերջածանցներ,<br>2. -un ժխտական նախածանց<br>**Քերականություն**<br>շարունակական վաղակատար ներկա<br>**Տեքստ.** Steve’s Story | **Տեսակը՝** գործնական<br>• բացատրական-ցուցադրական,<br>• լսողական վարժություններ,<br>• մտագրոհ:<br><br>**Նպատակը՝**<br>• նշված վերջածանցների և նախածանցների ճիշտ գործածում,<br>• շարունակական վաղակատար ներկա ժամանակի գործածում բանավոր խոսքում,<br>• մասնագիտական նոր բառապաշարի յուրացում: | 1. Բանավոր հարց ու պատասխան,<br>2. Նշված ածանցներով բառերի հայերեն համարժեքների ներկայացում,<br>3. Վարժությունների կատարում նշված ժամանակաձևով,<br>4. Տեքստի վերարտադրում դերախաղերով: | 1. Հասկանում է նշված վերջածանցներով ածականների իմաստը և ճիշտ է կիրառում խոսքի մեջ,<br>2. Կարողանում է բառերին տալ ժխտական իմաստ –un ժխտական նախածանցով,<br>3. Գիտի Շարունակական վաղակատար ներկա ժամանակաձևի կազմությունը և գործածությունը,<br>4. Կարողանում է կարդալ և թարգմանել “Steve’s Story” տեքստը: |
| **14-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /2 ժամ/<br>**Unit 7**<br>**Քերականություն**<br>ածականների | **Տեսակը՝** գործնական<br>• բացատրական- ցուցադրական,<br>• մտագրոհ,<br>• ճառազայթաձև հարցում,<br>• բացատրական թարգմանություն: | 1. Քերականական նյութի վերաբերյալ վարժությունների կատարում,<br>2. Նոր բառապաշարով նախադասությունների | 1. Կարողանում է ածականները համեմատել երեք աստիճաններով, գիտի բացառությունները, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | համեմատության աստիճանները<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>չափ ու քանակի, դրամական միավորներ<br>**Տեքստ.**<br>1. The Man Who Escaped. Ep. 7<br>2. Time for fun. | **Նպատակը՝**<br>• իմանալ տարբեր երկրների չափի, քանակի և դրամական միավորները,<br>• տիրապետել որակական ածականների համեմատության աստիճանների կազմությանը և գործածել խոսքում: | կազմում,<br>3. Խաչբառի լուծում,<br>4. Տեքստի վերարտադրում: | 2. Ճանաչում է չափ ու քանակի և դրամական միավորները,<br>3. Կարողանում է կարդալ և հայերեն վերարտադրել “Time for Fun”-ի տեքստը,<br>4. Վերարտադրում է “The Man Who Escaped” տեքստի 7-րդ մասը: |
| **15-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /4 ժամ/<br>**Unit 8**<br>**Բառակազմություն**<br>-en, -fy, -ate վերջածանցները<br>**Քերականություն**<br>անորոշ ապառնի ժամանակաձևը<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>հատկանիշներ, գույներ<br>**Տեքստ.** Elections<br>**Կրկնություն** | **Տեսակը՝** գործնական<br>• բացատրական թարգմանություն,<br>• բացատրական-ցուցադրական,<br>• իլյուստրացիա:<br><br>**Նպատակը՝**<br>• կարողանալ կազմել բայեր նշված վերջածանցներով և գործածել խոսքի մեջ,<br>• ներկայացնել ապազայում կատարվելիք գործողությունները,<br>• վերարտադրել տեքստը՝ գործածելով նոր մասնագիտական բառապաշարը: | 1. Հնչյունաբանական և քերականական վարժություններ կատարում,<br>2. Նոր բառապաշարի գործածություն բանավոր խոսքում,<br>Նշված ածականներով որոշիչ-որոշյալ կապակցությունների կազմում,<br>3. Տեքստի վերարտադրում: | 1. Հասկանում է նշված վերջածանցներով բառերի իմաստը,<br>2. Գիտի Անորոշ ապառնի ժամանակաձևի կազմությունը և գործածումը,<br>3. Ճանաչում է գույները և առավել հաճախ գործածվող ածականները,<br>4. Կարողանում է կարդալ և թարգմանել “Election” տեքստը: |
| **16-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /4 ժամ/<br>**Unit 8**<br>**Քերականություն** | **Տեսակը՝** գործնական<br>• բացատրական-ցուցադրական,<br>• խճանկար,<br>• իլյուստրացիա: | 1. Բլից հարցում<br>2. Դերախաղերի մասնակցություն անցած նյութերի հիման վրա, | 1. Կարողանում է համեմատել միևնույն հատկանիշներ ունեցող ածականները, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | համեմատական կառույցներ<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>• փոխըմբռնում,<br>• անցած նյութի կրկնություն<br>**Տեքստ.**<br>• The Man Who Escaped Ep. 8,<br>• Time for fun. | **Նպատակը՝**<br>• համեմատական կառույցների ճիշտ կիրառում,<br>• անցած բառապաշարի կրկնություն,<br>• նոր նյութի վերարտադրում:<br><br>**Քննարկվող հարցեր՝** համեմատական կառույցների հայերեն զուգադրումներ: | 3. Վարժությունների կատարում,<br>4. Տեքստի վերարտադրում,<br>5. Time for fun-ի թարգմանություն: | 2. Հիշում է անցած նյութը,<br>3. Կարողանում է վերարտադրել “The Man Who Escaped” տեքստի 8-րդ մասը,<br>4. Կարողանում է հայերեն վերարտադրել “Time for Fun”- տեքստը: |
| **17-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /4 ժամ/<br>**Unit 9**<br>**Բառակազմություն**<br>-ly մակբայակերտ վերջածանցը<br>**Քերականություն**<br>անցյալ շարունակական ժամանակաձևը<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>• օգնություն,<br>• առաջին բուժօգնություն<br>**Տեքստ.** Pete’s Travel to London | **Տեսակը՝** գործնական<br>• բացատրական-ցուցադրական,<br>• բացատրական թարգմանություն,<br>• լսողական վարժություններ:<br><br>**Նպատակը՝**<br>• -ly վերջածանցի ճիշտ և տեղին կիրառում,<br>• նշված ժամանակաձևի ճիշտ պատկերացում և կիրառում,<br>• նոր նյութի բառապաշարի յուրացում և նյութի վերարտադրում: | 1. Բանավոր հարց ու պատասխան,<br>2. Բառային քարտեզի կազմում,<br>3. Նոր բառապաշարի ամփոփում,,<br>4. Նոր դերախաղի մասնակցություն,<br>5. Տեքստի վերարտադրում: | 1. Կարողանում է կազմել մակբայներ –ly վերջածանցով և գործածել նախադասությունների մեջ,<br>2. Գիտի Շարունակական անցյալ ժամանակաձևի կազմությունը և գործածությունը,<br>3. Պատասխանում է “Օգնություն” և “Առաջին բուժօգնություն” թեմաներին առնչվող հարցերին,<br>4. Կարդում և |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | թարգմանում է “Pete's Travel to London” տեքստը: |
| **18-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /4 ժամ/<br>**Unit 9**<br>**Քերականություն**<br>շարունակական վաղակատար անցյալ<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>ընդհանուր արտահայտություններ<br>**Տեքստ.**<br>• The Man Who Escaped Ep. 9<br>• Time for fun | **Տեսակը՝** գործնական<br>• բացատրական-ցուցադրական,<br>• բլից հարցում,<br>• մտազրոհ,<br>• թարգմանություն:<br><br>**Նպատակը՝**<br>• քերականականժամանակաձևի ընկալում և կիրառում,<br>• նոր բառապաշարի յուրացում և գործածում տեքստի մեջ: | **1.** Նախորդ լեզվական նյութի ամփոփում,<br>**2.** Նախորդ քերականական նյութի ամփոփում,<br>**3.** Նոր լեքսիկական և քերականական նյութի կիրառում տեքստի մեջ,<br>**4.** Տեքստի վերարտադրում: | **1.** Գիտի Շարունակական վաղակատար անցյալ ժամանակաձևի կազմությունը և գործածությունը,<br>**2.** Պատասխանում է “Ընդհանուր արտահայտություններ” թեմային առնչվող հարցերն,<br>**3.** Կարդում և հայերեն վերարտադրում է “Time for Fun”-ի տեքստը,<br>**4.** Վերարտադրում է “The Man Who Escaped” տեքստի 9-րդ մասը: |
| **19-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /4 ժամ/<br>**Unit 10**<br>**Բառակազմություն**<br>-al ածականակերտ վերջածանցը<br>**Քերականություն**<br>վաղակատար անցյալ ժամանակաձև | **Տեսակը՝** գործնական<br>• բացատրական-ցուցադրական,<br>• ձնագնդի մեթոդ,<br>• թարգմանություն,<br>• տեսաֆիլմի դիտում:<br><br>**Նպատակը՝**<br>• -al վերջածանցի ճիշտ և տեղին գործածություն, | **1.** Քերականական և բառակազմական վարժությունների վարժությունների կատարում,<br>**2.** Թեստի լրացում,<br>**3.** Դերախաղեր,<br>**4.** Տեքստի թարգմանություն և բեմականացում: | **1.** Կարողանում է կազմել ածականներ –al վերջածանցով և գործածել նախադասությունների մեջ,<br>**2.** Գիտի Վաղակատար անցյալ ժամանակաձևի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **Հաղորդակցման հմտություններ**<br>շնորհակալական խոսքեր<br>**Տեքստ.** Pete's Travel to London (continued) | • քերականական ժամանակաձևի յուրացում և գործածում,<br>• նոր բառապաշարի յուրացում և գործածում տեքստում: | | կազմությունը և գործածությունը,<br>**3.** Պատասխանում է "Շնորհակալական խոսքեր" թեմային առնչվող հարցերին,<br>**4.** Կարդում և թարգմանում է "Pete's Travel to London" (շարունակություն) տեքստը: |
| **20-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /2 ժամ/<br>**Unit 10**<br>**Քերականություն**<br>անցած ժամանակաձևերի կրկնություն<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>• շնորհավորանք,<br>• հաճոյախոսություն:<br>**Տեքստ.**<br>• The Man Who Escaped Ep. 10,<br>• A Strange Sentence,<br>• Time for fun. | **Տեսակը՝** գործնական<br>• բլից հարցում,<br>• ինտերակտիվ դաս,<br>• գնդակի մեթոդ:<br><br>**Նպատակը՝**<br>• անցած քերականական նյութի կրկնություն,<br>• բանավոր խոսքի զարգացում,<br>• նոր բառապաշարի յուրացում,<br>• տեքստի վերարտադրում: | **1.** Բանավոր հարց ու պատասխան,<br>**2.** Դերախաղի մասնակցություն,<br>**3.** 2-րդ տեքստի թարգմանություն,<br>**4.** Time for fun-ի բեմականացում,<br>**5.** Տեքստի վերարտադրում: | **1.** Հիշում է անցած ժամանակաձևերը,<br>**2.** Պատասխանում է "Շնորհավորանք" և "Հաճոյախոսություն" թեմաներին առնչվող հարցերին,<br>**3.** Կարողանում է կարդալ և թարգմանել "A Strange Sentence" տեքստը,<br>**4.** Հայերեն վերարտադրում է "Time for Fun"-ի տեքստը,<br>**5.** Վերարտադրում է "The Man Who Escaped" տեքստի 10-րդ մասը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **21-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /4 ժամ/<br>**Unit 11**<br>**Բառակազմություն**<br>բարդ ածականներ<br>**Քերականություն**<br>շարունակական ապառնի ժամանակաձև<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>կենաց<br>**Տեքստ.** Jane's Letter | **Տեսակը՝** գործնական<br>• բացատրում-ցուցադրում,<br>• թարգմանություն,<br>• դերախաղ:<br><br>**Նպատակը՝**<br>• յուրացված բառապաշարի կիրառում նոր տեքստի մեջ,<br>• քերականական ժամանակաձի ճիշտ կազմում և կիրառում: | **1.** Թարգմանել նշված բարդ ածականները,<br>**2.** Լսել և կրկնել նոր մասնագիտական բառերը,<br>**3.** Թարգմանել տեքստը և վերարտադրել: | **1.** Թարգմանում է նշված բարդ ածականները և գործածում նախադասությունների մեջ,<br>**2.** Գիտի շարունակական ապառնի ժամանակաձևի կազմությունը և կիրառումը,<br>**3.** Կարողանում է սեղանի շուրջ կենացներ ասել,<br>**4.** Կարողանում է կարդալ և թարգմանել "Jane's Letter" տեքստը: |
| **22-ր շաբաթ** | Գործնական պարապմունք /2 ժամ/<br>**Unit 11**<br>**Քերականություն**<br>վաղակատար ապառնի ժամանակաձև<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>անձի արտաքին հատկանիշներ<br>**Տեքստ.**<br>• The Man Who Escaped Ep. 11<br>• Time for fun | **Տեսակը՝** գործնական<br>• բացատրական-ցուցադրական,<br>• իլյուստրացիա,<br>• թարգմանություն:<br><br>**Նպատակը՝**<br>• կարողանալ նկարագրել հանցագործին կամ կասկածյալին,<br>• ճիշտ կիրառել նշված ժամանակաձևը խոսքում,<br>• մասնագիտական նոր բառապաշարի յուրացում: | **1.** Տեքստում գտնել նշված ժամանակաձևով դրված նախադասությունները և մեկնաբանել,<br>**2.** Նկարագրել դասընկերոջ արտաքինը,<br>**3.** Ցուցանակի վրա ցույց տալ մարմնի մասերը և ասել անգլերեն տարբերակը,<br>**4.** Վերարտադրել տեքստը: | **1.** Գիտի Վաղակատար ապառնի ժամանակաձևի կազմությունը և գործածությունը,<br>**2.** Կարողանում է նկարագրել անձի արտաքին հատկանիշները,<br>**3.** Կարողանում է կարդալ և հայերեն վերարտադրել "Time for Fun"- տեքստը,<br>**4.** Վերարտադրում է "The |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Man Who Escaped”<br>տեքստի 11-րդ մասը: |
| **23—րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /2 ժամ/<br>**Unit 12**<br>**Քերականություն**<br>կրավորական սեռ<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>անձի արտաքին հատկանիշներ<br>**Տեքստ.** 82 Year old Man Who Shot Burglar Must Pay Him $4000 | **Տեսակը**՝ գործնական<br>• բացատրական-ցուցադրական,<br>• իլյուստրացիա,<br>• թարգմանություն:<br><br>**Նպատակը**՝<br>• կարողանալ տեղին գործածել կրավորական սեռը,<br>• մասնագիտական նոր բառապաշարի յուրացում և գործածում,<br>• Տեքստի բանավոր վերարտադրում: | **1.** Քերականական վարժությունների կատարում,<br>**2.** Ֆոտոռոբոտի կազմում,<br>**3.** Տեքստի վերարտադրում: | **1.** Գիտի կրավորական սեռի կազմությունն ու գործածությունը,<br>**2.** Կարողանում է նկարագրել անձի արտաքին հատկանիշները,<br>**3.** Կարողանում է կարդալ և թարգմանել “82 Year Old Man Who Shot Burglar Must Pay Him $4000” տեքստը: |
| **24-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /2 ժամ/<br>**Unit 12, 13**<br>**Բառակազմություն**<br>-ity գոյականակերտ վերջածանցը<br>**Քերականություն**<br>վաղակատար ժամանակաձևի կրավորական սեռը<br>**Տեքստ.** The Man Who Escaped Ep. 12 | **Տեսակը**՝ գործնական<br>• բացատրական-ցուցադրական,<br>• վեբ որոնում,<br>• բացատրական թարգմանություն:<br>**Նպատակը**՝<br>• համացանցային ռեսուրսների օգտագործումը ինքնակրթության նպատակով,<br>• քերականական նոր ժամանակաձևերի ճիշտ կիրառում,<br>• նոր բառապաշարի յուրացում և կիրառում: | **1.** –ity վերջածանցով գոյականներով նախադասությունների կազմում,<br>**2.** Քերականական վարժություններ,<br>**3.** Տեքստի վերարտադրում: | **1.** Կազմում է գոյականներ –ity վերջածանցով և դրանք գործածում է նախադասությունների մեջ,<br>**2.** Գիտի Վաղակատար ժամանակաձևերի կրավորական սեռի կազմությունը և գործածությունը,<br>**3.** Վերարտադրում է “The Man Who Escaped” տեքստի 12-րդ մասը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **25-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /2 ժամ/<br>**Unit 13**<br>**Քերականություն**<br>շարունակական ժամանակաձևերի կրավորական սեռը<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>ոստիկանը փողոցում<br>**Տեքստ.**<br>• The Man Who Escaped Ep. 13<br>• Time for fun | **Տեսակը՝** գործնական<br>• բացատրական-ցուցադրական,<br>• ինտերակտիվ հարցում,<br>• բացատրական թարգմանություն:<br><br>**Նպատակը՝**<br>• քերականական ժամանակաձևերի տեղին գործածում,<br>• մասնագիտական բառապաշարի գործածում՝ օտարերկրացուն օգնություն ցույց տալու նպատակով: | 1. Քերականական վարժություններ,<br>2. Երկխոսությունների կազմում,<br>3. Տեքստի բանավոր վերարտադրում: | 1. Գիտի շարունակական ժամանակաձևի կրավորական սեռի կազմությունը և գործածումը,<br>2. Տիրապետում է “Ոստիկանը փողոցում” թեմայի բառապաշարին և մասնակցում դերախաղերին,<br>3. Կարողանում է կարդալ և թարգմանել “Time for Fun”-ի տեքստը,<br>4. Վերարտադրում է “The Man Who Escaped” տեքստի 13-րդ մասը: |
| **26-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /2 ժամ/<br>**Unit 14**<br>**Բառակազմություն**<br>բարդ ածականներ<br>**Քերականություն**<br>համեմատական կառույցներ<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>ոստիկանության բաժնում<br>**Տեքստ.** Steve Tells About | **Տեսակը՝** գործնական<br>• բացատրական-ցուցադրական,<br>• ճառազայթաձև հարցում,<br>• իլյուստրացիայի մեթոդ:<br><br>**Նպատակը՝**<br>• համեմատական կառույցների ճիշտ գործածում,<br>• հասնել այն արդյունքին, որ ապագա ոստիկանը կարողանա ցանկացած իրավիճակում հաղորդակցվել | 1. Տրված օրինակների հիման վրա կազմել նոր բարդ ածականներ և գործածել նախադասություններում,<br>2. քերականական վարժություններ,<br>3. երկխոսությունների գրավոր կազմում,<br>4. տեքստի վերարտադրում: | 1. Թարգմանում է տրված բարդ ածականները և գործածում է նախադասությունների մեջ,<br>2. Ներկայացնում է համեմատական կառույցներ և թարգմանում է,<br>3. Տիրապետում է “Ոստիկանության բաժնում” թեմայի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | English Sistem of Law | օտարերկրացու հետ,<br>• մասնագիտական նոր բառապաշարի յուրացում: | | բառապաշարին և մասնակցում է դերախաղերին,<br>**4.** Կարողանում է կարդալ և թարգմանել “Steve Tells About English Sistem of Law” տեքստը: |
| **27-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /2 ժամ/<br>**Unit 14**<br>**Քերականություն**<br>անցածի կրկնություն<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>իրավիճակային երկխոսություններ<br>**Տեքստ.**<br>• The Man Who Escaped Ep. 14<br>• Time for fun | **Տեսակը**՝ գործնական<br>• բացատրական-թարգմանական<br>• բլից հարցում,<br>• տեսաֆիլմի դիտում և մեկնաբանում:<br><br>**Նպատակը**՝<br>• անցած նյութի կրկնություն և նոր երկխոսությունների կազմում,<br>• նոր բառապաշարի յուրացում:<br><br>**Քննարկվող հարցեր**՝ համեմատական քերականություն: | **1.** Անցած քերականական նյութերի վերաբերյալ վարժությունների կատարում,<br>**2.** Երկխոսությունների կազմում անցած քերականական և լեքսիկական նյութերի գործածությամբ,<br>**3.** Տեքստի վերարտադրում: | **1.** Հիշում է անցած քերականությունը,<br>**2.** Մասնակցում է իրավիճակային երկխոսություններին,<br>**3.** Կարողանում է կարդալ և հայերեն վերարտադրել “Time for Fun”-ի տեքստը,<br>**4.** Վերարտադրում է “The Man Who Escaped” տեքստի 14-րդ մասը: |
| **28-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /2 ժամ/<br>**Unit 15**<br>**Բառակազմություն**<br>-ive վերջածանցը<br>**Քերականություն**<br>ժամանակաձևերի | **Տեսակը**՝ գործնական<br>• բացատրական-ցուցադրական,<br>• թարգմանություն,<br>• ինտերակտիվ հարցում:<br><br>**Նպատակը**՝<br>• կարողանալ ճիշտ համաձայնեցնել | **1.** Քերականական վարժություններ,<br>**2.** –ive վերջածանցով ածականների թարգմանություն,<br>**3.** տեսաֆիլմի դիտում և վերարտադրում, | **1.** Ճանաչում է –ive վերջածանցը և կազմում է նոր բառեր,<br>**2.** Գիտի ժամանակաձևերի համաձայնեցումները,<br>**3.** Վերարտադրում է |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | համաձայնեցումը<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>Լոնդոնի տեսարժան վայրերը<br>**Տեքստ.** Judicial Profession in England | ժամանակաձևերը,<br>• մասնագիտական նոր բառապաշարի յուրացում և գործածում: | **4.** տեքստի վերարտադրում: | Լոնդոնի տեսարժան վայրերին վերաբերող տեքստերը և պատասխանում է հարցերին,<br>**4.** Վերարտադրում է “Judicial Profession in England” տեքստը: |
| **29-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /2 ժամ/<br>**Unit 15**<br>**Քերականություն**<br>ուղղակի և անուղղակի խոսք<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>Լոնդոնի տեսարժան վայրերը<br>**Տեքստ.**<br>• The Man Who Escaped Ep. 15<br>• Bribery<br>• Time for fun | **Տեսակը՝** գործնական<br>• բացատրական-ցուցադրական,<br>• թարգմանություն,<br>• տեսաֆիլմ,<br>• ինտերակտիվ հարցում:<br><br>**Նպատակը՝**<br>• կարողանալ ուրիշի ուղղակի խոսքը դարձնել անուղղակի և հակառակը,<br>• տեղեկացված լինել Լոնդոնի առավել հայտնի տեսարժան վայրերի մասին,<br>• յուրացնել նոր բառապաշար: | **1.** Նշված երկխոսությունը դարձնել պատմողական,<br>**2.** տեսաֆիլմը դիտելուց հետո պատմել Լոնդոնի տեսարժան վայրերի մասին,<br>**3.** վերարտադրել տեսքտը,<br>**4.** թարգմանել 2-րդ տեքստը: | **1.** Ճիշտ է գործածում ուղղակի և անուղղակի խոսքը,<br>**2.** Վերարտադրում է Լոնդոնի տեսարժան վայրերի մասին տեքստերը,<br>**3.** Կարողանում է կարդալ և թարգմանել “Bribery” տեքստը,<br>**4.** Կարողանում է կարդալ և հայերեն վերարտադրել “Time for Fun”-ի տեքստը,<br>**5.** Վերարտադրում է “The Man Who Escaped” տեքստի 15-րդ մասը: |
| **30-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /2 ժամ/<br>**Unit 16**<br>**Բառակազմություն**<br>• բարդ ածականներ | **Տեսակը՝** գործնական<br>• բացատրական-ցուցադրական,<br>• ինտերակտիվ հարցում,<br>• թարգմանություն: | **1.** Նշված ածականները գործածել խոսքի մեջ,<br>**2.** Քերականական վարժություններ,<br>**3.** Տեքստի թարգմանություն, | **1.** Թարգմանում է տրված բարդ ածականները և գործածում է նախադասությունների մեջ, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | • քերականություն<br>• զեղչված շաղկապով ստորադասական նախադասություններ<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>Հայաստանի տեսարժան վայրերը<br>**Տեքստ.** Universal Declaration of Human Rights | **Նպատակը՝** նոր բառապաշարի յուրացում և կիրառում:<br><br>**Քննարկվող հարցեր՝** անգլերեն և հայերեն բարդ ստորադասական նախադասությունների համեմատությունը: | **4.** Տեքստի վերարտադրում,<br>**5.** Երկխոսությունների կազմում: | **2.** Կարողանում է կազմել զեղչված շաղկապով ստորադասական նախադասություններ,<br>**3.** Պատմում է Հայաստանի տեսարժան վայրերին վերաբերող տեքստերը,<br>**4.** Վերարտադրում է “Universal Declaration of Human Rights” տեսքտը: |
| **31-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /2 ժամ/<br>**Unit 16**<br>**Քերականություն**<br>կրկնություն<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>Հայաստանի տեսարժան վայրերը<br>**Տեքստ.**<br>• The Man Who Escaped Ep. 16<br>• Time for fun | **Տեսակը՝** գործնական<br>• բացատրական-ցուցադրական,<br>• տեսաֆիլմի դիտում և քննարկում,<br>• բլից հարցում:<br><br>**Նպատակը՝** նոր բառապաշարի յուրացում և գործածում:<br><br>**Քննարկվող հարցեր՝** համեմատական քերականություն: | **1.** Քերականության կրկնություն վարժությունների միջոցով,<br>**2.** Տեսաֆիլմի դիտում և քննարկում,<br>**3.** Տեքստի վերարտադրում,<br>**4.** Time for fun-ի թարգմանություն: | **1.** Հիշում է անցած քերականությունը,<br>**2.** Կարողանում է պատմել Հայաստանի տեսարժան վայրերի մասին տեքստերը,<br>**3.** Կարողանում է կարդալ և հայերեն վերարտադրել “Time for Fun”-ի տեքստը,<br>**4.** Վերարտադրում է “The Man Who Escaped” տեքստի 16-րդ մասը: |
| **32-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /2 ժամ/<br>**Unit 17**<br>**Բառակազմություն** | **Տեսակը՝** գործնական<br>• բացատրական-ցուցադրական,<br>• լսողական վարժություններ,<br>• թարգմանություն: | **1.** Թարգմանել տրված բարդ գոյականները և գործածել նախադասությունների մեջ,<br>**2.** Պատմել նշված տեսարժան | **1.** Կարողանում է թագմանել բարդ գոյականները և գործածում է |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | բարդ գոյականներ<br>**Քերականություն**<br>անդեմ նախադասություններ<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>Երևանի տեսարժան վայրերը<br>**Տեքստ.** Judge's "respectful" plea for Plainer English | **Նպատակը՝**<br>• մասնագիտական նոր բառապաշարի յուրացում և գործածում,<br>• օտարերկրյա զբոսաշրջիկներին անհրաժեշտության դեպքում ներկայացնել Երևանի տեսարժան վայրերը: | վայրերի մասին,<br>**3.** Վերարտադրել տեքստը: | նախադասությունների մեջ,<br>**2.** Թարգմանում է տրված անդեմ նախադասությունները և գործածում է խոսքի մեջ,<br>**3.** Պատմում է Երևանի տեսարժան վայրերին վերաբերող տեքստերը,<br>**4.** Կարողանում է կարդալ և թարգմանել "Judge's respectful plea for Plainer English" տեքստը: |
| **33-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /2 ժամ/<br>**Unit 17**<br>**Քերականություն**<br>one անորոշ դերանունը<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>անցած նյութերի ամփոփում<br>**Տեքստ.**<br>• The Man Who Escaped Ep. 17<br>• Time for fun | **Տեսակը՝** գործնական<br>• բացատրական-ցուցադրական,<br>• լսողական,<br>• ձնազնդի մեթոդ:<br><br>**Նպատակը՝**նոր բառապաշարի յուրացում և գործածում:<br><br>**Քննարկվող հարցեր՝** One անորոշ դերանունի հայերեն համարժեքը: | **1.** Երկխոսությունների կազմում անցած նյութի հիման վրա,<br>**2.** Վարժությունների կատարում,<br>**3.** Տեքստի վերարտադրում: | **1.** Տեղին է գործածում one անորոշ դերանունը և կազմում է բառաբարդումներ,<br>**2.** Հիշում է զրուցարանից անցած բոլոր նյութերը և պատասխանում է տրված հարցերին,<br>**3.** Կարդանում է կարդալ և հայերեն վերարտադրել "Time for Fun"-ի տեքստը,<br>**4.** Վերարտադրում է "The Man Who Escaped" |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | տեքստի 17-րդ մասը: |
| **34-րդ շաբաթ** | Գործնական պարապմունք /2 ժամ/<br>**Unit 18**<br>**Բառակազմություն**<br>բարդ գոյականներ<br>**Քերականություն**<br>բարդ ստորադասական նախադասությունը<br>**Հաղորդակցման հմտություններ**<br>անցած նյութերի կրկնություն<br>**Տեքստ.**<br>• The Man Who Escaped Ep. 18<br>• Time for fun | **Տեսակը՝** գործնական<br>• բացատրական-ցուցադրական,<br>• գնդակի մեթոդ,<br>• թարգմանություն:<br><br>**Նպատակը՝**<br>• կարողանալ հավուր պատշաճի ներկայանալ օտարերկրացուն և անհրաժեշտության դեպքում օգնել կամ պահանջել պահպանել հասարակական կարգ ու կանոնը,<br>• Նոր բառապաշարի յուրացում:<br><br>**Քննարկվող հարցեր՝** The Man Who Escaped դետեկտիվ պատմվածքի քննարկում և վերլուծություն: | **1.** Թարգմանել նշված բարդ գոյականները և գործածել նախադասությունների մեջ,<br>**2.** Կազմել երկխոսություններ,<br>**3.** Վերարտադրել տեքստը և ամփոփել,<br>**4.** Թարգմանել Time for fun-ը: | **1.** Կարողանում է կազմել բարդ գոյականներ և գործածել նախադասությունների մեջ,<br>**2.** Գիտի բարդ ստորադասական նախադասությունների կազմությունը,<br>**3.** Հիշում է զրուցարանից անցած նյութերը և պատասխանում է տրված հարցերին,<br>**4.** Կարողանում է կարդալ և հայերեն վերարտադրել "Time for Fun"-Ի տեքստը,<br>**5.** Վերարտադրում է "The Man Who Escaped" տեքստի 18-րդ մասը: |